



Բայց գտնուեցան չարածիններ ալ, որ Սարգիսիանաութեան առաջարկը լուրջ նկատելով, այդ տուրև առէն ստացուելիք գործարարներ հրապարակեցան:

Եւ այդ օրեր արդէն՝ այս վերջին դասուն պատկանողներ, եզրագտոտի ամէն կողմերը տարածայնութիւն մը շրջեցուցած էին թէ՛ Պ. Օտեան երեսնադէմի վանքը ծախու հանելու իր առաջարկին փոխան, 1000 նոյ կուրճ մը կամ 250 օխանոյ տակաւ մը չամիչի սքանչելի զիւլիւլ միջնորդէք առած էր:

Այս լուրը Օտեանի բարեկամները անգործնապահութեան կամ թուրքերանութեան հետեանք հազորդած էին իրեն, ուստի անուղղակի միջոցներով հերքել ուղեց այդ անհիմն տարածայնութիւնները, եթէ բուն և ներքին նպատակը իր նոր վաճառուէն իր միջնորդէք ստացած ընտիր զիւլիւլին համը չարեւու համար նոր տեսակներէ խորշիւր չէր:

Ահա ուրիշ՝ ծագում կանէր Պ. Օտեանի սրամտութիւնը, սուրճ մը ընտիրու պահուն...

Ինչ որ ալ ըլլայ սակայն իր զիտաւորութիւնը, անուշ ըլլայ պիտի ըսենք: Օտեան՝ իր սխալումներովը, իր սրամտութիւններովը, իր ծաղրանքներովը: Իր քաջքուքներովը իր զուարթհարաւէր երգի-ծաբանութիւններովը, միշտ սուրճ մը կարծէ ամենուն քով և ամեն ասան: Ասիկայ պէտք չէ ուրանալ: Այսպիսի ուրացում մը մարդու մը արժանիքը ունակութիւնը կը նշանակէ, և ներքին մեղքերէն ալ չէ դժբաղդարար:

Այս անգամ Օտեանն էր որ հարցաքննիչ դատարարի բարեհամբոյր ժեւարով մը (ժեւար՝ բառ ստարամուտ և լատինարոյր) տերսոյ վայրկենական լուսթիւնը խղէր:

Օտեան. — պատմէ՛ նայինք. Եղիշէ՛. սա քու զարմանալի արկածներդ (ո՛չ վարդանանց հազար երեսուն և վեց վկայից, որոնց վեցերորդ տպագրութիւնը հրատարակելու է արդէն) պատմէ՛. ըսէ՛ նայինք. ո՛ւր մնացիր երկու տարիէ ի վեր: Արշալոյս ը ինչո՞ւ չի հրատարակուեցաւ. Հանդուցեալ Եղիշէ՛ մանեան Եպիսկոպոսի « իմ Աքսորի կեանքը » ո՛ւր մնաց:

Ես. — կը զարմանամ, Օտեան, որ այդպիսի հարցում կընես ինձի: Ի՞նչն որ՝ քու ակաւ խօսք իդ մէջ այդ ամեն եղածներուն բուն շարժառիթը եղաւ « ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՅՆՆԱԿԱՆ ՍԻՐՈՒՆ՝ որչափ զգայնիկ գրուածները ծաղրելու յանգանութիւնը ունեցար, դուն որ ակաւ բեմի մէջ ժտեցար « Եղիսկան վերադուրն եղիսէի փոխանցած ըլլալը » նրապարակելի և այս անոյտ մասնաւոր հրահանգներու համաձայն. դուն որ՝ վերջապէս դարձեալ Ակաւ խօսքիդ — եթէ չեմ սխալիր — 1906 Ապրիլի թիւերէն միտն մէջ անարդարութեան սիւնին գամեցիր « Աքսորի կեանք » ինչ հրատարակումը, և լրբնի բառերով նախատել փորձելով զիս, հիմայ ի՞նչ ըսել կուզես այդ հարցերը ինձի ուղղելով: Մի՛թէ ինձմէ ա.

ւելի ստոյգ ծանօթութիւններ չունիս ինձի դէմ ամենամարդօրէն սարուած ոճրոյն և ամենախրթ պայմաններու մէջ հնարուած դաւադրութիւններու մասին: Թո՛ղ այդ վատութեանց հեղինակները, որոնք մեծագոյն մասամբ կուսակցականներէ բաղկացած էին և ինձի ալ ծանօթ, ուզածնուն չափ լրագրաց մէջ պօսան կանչեն թէ՛ իրենք « պաւաղութիւններէ » պիտի հրատարակեն կամ հրատարակեն: Սակայն ո՛չ ապաքէն 908 Յուլիս 11 էն առաջ, իրենց հրատարակային խոստովանութեան և յայտարարութեանը նայելով՝ « դաւադիրներ » էին: Յայտնի է որ այս փառութեան շարժը՝ անգամ մը այդ դասու մարդաց երակներուն մէջ իր կործանիչ ազդեցութիւնը տարածելէ յետոյ, մինչև ոսկորներուն ծուծը անբուժելի վէրքերով կրնայ պատել: Բանի որ այս այսպէս է, ուրեմն իմ ինչորս բացատրութիւններու չկարօտիր. գոնէ՛ քեզի համար մանաւանդ որ կը հաւատամ թէ՛ բաւականէն ալ շատ աւելի ծանօթութիւններ ունիս...

Օտեան. — Իմ մասին պէտք է վտահ ըլլաս թէ՛ չարատորէն վարուելու գիտում ունեցած չեմ, որովհետև ո՛ն է կուսակցութիւն չեմ բռնել: ... Կալով 1906 Ապրիլի « Ակաւ խօսք » ին մէջ գրուածին, որուն համար նախատախից էր կ'ըսես, Միքայէլ Կիւրճեան գրած էր իսկ « Ոմանց տարեցոյց » ալ ուղագրէին ծախսած եմ և քանի մը ժամուան աշխատութիւն է:

Ես. — Պ. Օտեան. Ի՞նչու համար միտ չեմ որ ժողովուրդը գիտակցութեան և բարոյականի շաւղին մէջ առաջնորդելու կոչումը արժանապէս կամ անարժանաբար ունեցող ո՛ն է հրատարակողի իր պաշտօնակիցները անուանարկելուն մէջ հաճոյք, կամ գրականութեան փառք որոնէ: Այս վատթար ունակութիւնը քաջալիբուռելով, — դժբաղդարար մեր մէջ հաստահիմն արմատներ ալ ձգած է սա — մեծերու դպրոցին այդ առաջնորդ ուսուցիչները ընթերցող հանրութեան առջև շատ անգամ յանիրաւի կը վարկաբեկին և իրենց ջանքերը ապարդիւն կը մնան: Տարակոյս չկայ որ կընդունիք թէ՛ վարժարանը մանուկներու միտքը զարգացնելու պիտի ծառայէ, իսկ լրագրութիւնը՝ ընթերցող հանրութեան մտածելու պաշար հայթայթելով, ըստ կարի զայն մշակելու և պոպոքեր դարձնելու յատուկ է:

Եթէ ո՛ն է պատճառու վարժարանի ստանդին առջև վարկաբեկ եղած ուսուցիչ մը ազդեցութիւնը նուազած կ'ըլլայ, որչափ ևս առաւել կը նուազի հրատարակողին ազդեցութիւնը զարդացած ուսանողներուն քով:

Ասիկայ միտալին մէկ կըլնէ տակաւին:

Կ'ըսես թէ՛ Ակաւ խօսք ի Ապրիլի թուոյն մէջ լրբնի և անարգական բառերով յարձակում գործող Պ. Միքայէլ Կիւրճեանն էր:

Լա՛ւ. պատճառ մը չունէի՛ և այդ Պարոնէն չէի կրնար սպասել թէ՛ իմ անձէս պատ՝ — եթէ յարմար առիթ սեպած էր ինձմէ վրէժ լու-

ծելու. — ուրիշ պատիւը չօչափող անձա՛յ բացատրութիւններ գործածել պիտի յանգանէր իր գրածներուն մէջ:

Եթէ ինձի հետ ո՛ն է հակառակութիւն և թշնամութիւն ունէր, կարող էր միմիայն իմ անձա ու իմ թիրութիւններս իր գրչին առարկայ ընել. որուն համար չ'ցաւէի թերիս կամ նուազ ցաւէի. Համոզուած ըլլալով որ իմ ապրած առարկէս վտանք ալ ունի իր մէջ, ինչպէս վարդը փուշեր. բայց ի՞նչ ըսել իրեն որ՝ վերջապէս ընտանիքի մը կը պատկանի. մայր ունի և թերևս քոյրեր և շատ հուանական է որ սիրուն ալ աղջականներ. Պէտք չէ՛ր որ այդ նախատինքները դրի տակ առնելու ատեն աչքի առջև ունենար թէ՛ ինքը ուրիշ մը պատուոյն վրայ այդ անարգ բառերով յարձակելու ատեն, իրեններուն ալ լեցուն բերնով քրքրողներ պիտի կրնան գտնուիլ...

Պ. Միքայէլ Կիւրճեան ինձմէ վշտացած կրնայ ըլլալ իր հոչակաւոր մեղալիքի հրատարակած ըլլալու համար: Բայց ատիկայ իր մասնաւոր և գրաւոր ինքրանաց վրայ հրատարակութեան տըրուած է. եթէ պաշտօնը կորսնցնել է կը վարնարու այդպէս տեղի պիտի տար, առաջուրէն կարող էր չ'գրել:

Չեմ կարծեր որ դիտցած ըլլաս թէ՛ ողբացեալն Սբփիար՝ այդ հրատարակութիւնը և անոր յարակից Տ. Անն Մկրտիչեանի գրածները, մեծ հետաքրքրութեամբ՝ մինչև մեր տունը գալով Արշալոյս ի հաւաքածներուն մէջ փնտած և ուշի ուշով քննած է, երբ « Երբակ ի խմբագրութիւնը պիտի ըստանձնէր հոս ի Գահիրէ »:

Եթէ Պ. Միքայէլ Կիւրճեան Ազգայնագրից պոյքարներուն առթիւ նեղացած է ինձմէ: Այդ գործին մէջ ալ՝ ես լրագրողի պարտականութիւններու հետեւած եմ: Մի՛թէ եզրագրոսի մամուլը մասնաւորներու քմահաճոյքին երթարկուած էր, ինչպէս հիմայ Պոլսոյ մէջ եղած է կըսեն, քանի որ մամուլը ազատ էր եզրագրոսի մէջ:

Եթէ Պ. Միքայէլ Կիւրճեանի սիրը՝ « Պետրոս Ազգայնագր » ստորագրութեամբ՝ « Երկուսն » ի մէջ հրատարակած մէկ գրութեան համար « Արշալոյս » ին սեփականութեան դէմ մեղանշած ըլլալը երբեմին տալէս առաջացած է, դարձեալ իրաւունք չունէր այդ լեզուով և ոճով զիս նախատելու. որովհետև « Երկուսն » մը կամ պարզապէս Մարգարիտ. անունը՝ վերնագիր իր գրութիւնը ժամանակին մասնաւոր համաձայնութեամբ « Արշալոյս » ին ծախած, և քիչ կամ շատ փոխարժէքը ստացած էր ստացականներու փոխարէն: Այլ ևս հարկ չէր մընար վերնագրէն բառ մը երկուք և ստորագրութիւնը փոխելով « Երկուսն » ին ալ ծախել: Մի՛թէ կարելի չէ՛ր ուրիշ նիւթի վրայ տարբեր ու նոր բան գրել. կարծեմ գրելու կարողութիւնը չէր որ պակսէր իրեն: Ինչպիսիք պիտի զգացնէի այդ արարքին անձա՛ս ըլլալը:

Այսպէս, Պ. Օտեան. յ'որչափ պատուածանաչութիւնը չ'յարգուիր մեր մէջ. յ'որչափ պատշաճութիւնները ստանալիս կըլլան, յ'որչափ կուսակցամուլութիւնը զաման կը մզէ ամէն սրբութիւն առաջնորդընելու, մենք՝ ու մեր ազգն ալ մեզի հետ՝ չ'պիտի կրնանք որոշ նպատակակէտի մը համար, ու ամէն ատեն կէս ճամբուն վրայ չնշտապառ պիտի ըլլանք... Բննադատել կը հասկնամ օրինաւոր սահմաններու մէջ, երբ մանաւանդ իրական պատճառ գոյութիւն ունի:

Հիմայ դառնամ քու հարցումիդ թէ՛ ո՛ւր էի. ինչո՞ւ « Արշալոյս » չ'հրատարակուեցաւ, թէ՛ ի՞նչ եղաւ Հանդուցեալ Եպիսկոպոսին « իմ Աքսորի կեանք » երկաւորութեան ձեռագիրը:

Ե. ՅՈՐՈՍԵԱՆ

(Շարունակելի)

Ա. Չ. Պ. Ս. Յ. Գ.

Ե Ո Ր Յ Ե

Վե՛շ. ՀԱՅՐԱՊԵՏԸ

Ամենայն Հայոյ Ընդհ. Հայրապետ Տ. Տ. Մատթէոս Ս. Կաթողիկոսի Պաշտօնը և հպատակութիւնը հաստատուած ըլլալով, Արդարութեան գործոց նախարարութեան կողմէ ծանուցագրով մը զեկուցուած է Ն. Ս. Օծութեան:

Խառն ժողովը որոշած է պատգամաւորութեան մը միջոցաւ իր շնորհաւորութիւնները մատուցանել Ն. Վեհափառութեան և պատգամաւոր նշանակուած են Տ. Տ. Հայրեհակ զիմաքսեան և Մկրտիչ Վեհապետան նպիտոպոսները, Գեորգ Մալանեան և Վէրդ Ասլանեան Մ. վարդապետները, Տրդատ Պոյաճեան և Տաճատ բաշայեան Բահանները և Ստեփան Գարեան Մկրտիչ Մանուկեան, անհրաժեշտ Յարութիւն Եհարկեան, Գէորգ Թորոքեան և Յակոբ Գորեան Էֆէնախները:

ՏԵՂԱՊԱՀ

Խառն ժողովը զազանի քուէսարկութեամբ Պատրիարքական Տեղապահի ընտրութիւն կատարելով, Պարուսայի Առաջնորդ Տէր Յովհաննէս Եպիս. Արշարունին 14 Բուէով Պատ. Տեղապահ ընտրած է:

Ժողովը անմիջապէս ընտրութեան մագրպարան պատրաստելով Բ. գուռը զրկած է և հետագրած նորին Կերտապատուութեան որպէսզի Պոլիս գայ — իսկ Պատ. փոխանորդ Տ. Ղևնդ. Վարդապետին ալ պէտք եղած հրահանգները տուած է ընդունելութիւնը կատարելով Պատրիարքարան առաջնորդելու համար նորին Կերտապատուութիւնը:

ԻՐԱՆԻՆԻՔ

Վառնայի « ԻՐԱՆԻՆԻՔ » թերթին Խմբագիր-Տնօրէնը, Պ. Յ. Գուրպէթ, կը ծանուցանէ թէ՛ իր թերթը պահ մը դադարեցնելով Պոլիս մեկնած է տեղւոյն վրայ ուսումնասիրելու թէ՛ ազատ թերթ մը կարելի է Պոլիս փոխադրել և համոզուելով որ ամէն ճշմարտութիւն անվերապահօրէն գրել և քննադատելու վիճակին մէջ չ'գտնուիր տակաւին Պոլսը, որոշած է « Իրաւունքը » դարձեալ

Վառանայի մէջ հրատարակել, որուն Ա. թիւն ալ ստացած ենք արդէն:

Տ. Գուրգէնի զանգատը այս անգամ կերկրէ թէ՛ կառավարական սեղմումներու դէմ չէ, այլ հայ կուսակցութեանց հաստատել փորձած բռնական նար Բեթիւնի դէմ:

ՊԵՏՐՈՒԹԻ ԵԿԵՂԵՅԻՆ

Պէտքովն ստացուած նամակներէն կը տեղեկանանք թէ՛ քանի մը յուսամիտ և յուսադիմանալի երկրասարգներ, բռնի և անխոստովանելի պայմաններու մէջ դուրս հանած են Երուսաղէմի Պատրիարքութեան կողմէ պաշտօնի հրաւիրուած Կամախիոսի խոստովանահայր Տ. Եփրեմ վարդապետը և դուռնորդ փակելով բանալիները գրպանին դրած են:

Մինչև վերջին ամիսները Պէտրութի մէջ կը պաշտօնավարէր Սաղիմայ Մարտիրոսեան Արք. Դէրդ վարդապետ ձանձղան. որ այժմ պաշտօնով Երուսաղէմ մեկնած է և այդ պատճառաւ Տ. Եփրեմ վարդապետը պաշտօնի հրաւիրուած, ու պատահա՞մը պատմուեցաւ արդէն:

Սաղիմայ Պատրիարքը լեւելով տխուր միջադէպը, իր կողմէ Պէտրութի կը դրկէ Արք. Վահան վարդապետ Բէշիլեանը, որուն գալուտեան ծանօթանալով իրաւաստութիւնը, պարտաւորուած միջոցաւ կը հաղորդեն յիշեալին թէ՛ պէտք է որ եկած շաբաթուոյ ևս գառնայ, իբր թէ ժողովուրդը չընդունիր եղբր զինքը, որովհետեւ Երուսաղէմէն եկած կարգադրութիւնները չ'պիտի ճանչնայ այլ ևս:

Վարդապետը այսպէս ասանց Վանք առաջնորդելու պահպով մը կը տանին, և առանց նոյն իսկ ժողովուրդին անոր երեսը ցոյց տալու, վերստին ճամբու կը դնեն:

Ստացուած նամակներու պարունակութեանց կը հասկցուի թէ կուսակցական և մատիկներու զործըն է այս, և այնպէս կերևայ որ այս կարգի բռնական անիրաւութիւնները շտանալով, վերջուպէս ժողովուրդը պիտի սթափի իր խոր բունէն, և իր ժանիքները ցոյց տայ այն դատակարարներուն, որոնք ո՛րէն բռնակալէ մը առելի բռնութիւններ ի գործ կը դնեն իրեն ազատութիւնը կապուելու, և փափակ զգացումները մինչև այս ստիճան խոչանդելու յաւակնորութեան մէջ:

Այդ նամակներէն մէկ հատը միայն իբր նմոյշ պիտի հրատարակուի առաջիկայ թուով:

ՍԱՀ. ՌԱՄ. ԿՈՒՂԱԿՅՐԻՓԻՆ

Մեր նախորդ թուով եղած դիտողութեան ի պատասխանի թէ՛ վերջոյ իջեալ կուսակցութիւնը առանց Պատրիարքարանի որոշման և հաւանութեան Հայերը զինուորագրութեան կը պարտաւորէ և ինչ և ինչ, տարածայնութիւն մը հրապարակ դրուած է հոս թէ այդ կուսակցութեան կանոնագիրը Իզմիրեան Վեհափառին հասնուած թեմաք և սրբազրութեամբ հրապարակ եղած է:

Եթէ այդպէս է, ինչո՞ւ արեւմտի Ռամկավար կուսակցութեան ծրարագիրը հրատարակուելէ յետոյ, Պատրիարքարանը պատ ի պատ և անորոշ պատասխաններ կուտայ գա-

ւառներու առաջնորդաց կողմէ այդ մասին եղած հարցումներուն և նոյնչափ տարտամ շրջաբերականներ կը հրատարակէ հայ թերթերու մէջ:

Իզմիրեանի ժողովրդականութիւնը այս պայմաններուն մէջ շահագործողներուն պէտք է ըսել թէ՛ սուտ կը խօսին, և առանց այս մասին Իզմիրեանի կամ Պատրիարքարանի հերքումը կարգաւոր, վերջոյ իջեալ տարածայնութիւնները կակածելի և վիճելի կը մնան:

ՉԷՑԻՈՒՆԻ ԲԱՐԵՍԻՐԱՅ

Ի՞նչ կրնէ սա ընկերութիւնը, որ ժամանակէ մը ի վեր Գահիրէ և Աղէքսանդրիա բաւական աչքի ընկնող շրջաններ բռնաբեց:

Աղէքսանդրիայ մէջ այդ ընկերութեան անունով հաւաքուած գրամներու մասին, կամ չիտակ պիտի ըլլայ ըսել՝ կորսուած դրամներու մասին՝ բաւական խոսուեցաւ տեղական թերթերու մէջ:

Ասկէ ամիսներ ալ յառաջ ըսողներ և զրոյնքեր եղան թէ ընկերութեան հայիւնները կարգի պիտի դրուին և Գանձապետներու զրպանք մտադրուած դրամները մէջ տեղ պիտի բերուին Սովետացի զրկուելու համար: Այլ մին եղաւ և ոչ միւսը: Մեծամասնութիւն չ'զոյսացաւ...

Ընդհանր կան թէ՛ այդ ընկերութեան նախորդ գանձապետներէն մէկունը ըրով 90էն 100 ոսկուոյ չափ գրամ կայ և մինչև ցարդ ընկերութեան չ'է յանձնուած և նպատակի մ'ալ գործածուած չ'է:

Իսկ Գանձապետ պարաները հիմայ յորի նետած - սնանկացած են: Բարոյական սնանկութենէ յետոյ նիւթականը անտարկոյս: Գոնէ կարելի չ'էր և Չէյթունի բարեօրոյնը ին փարաները անընդունարան առնել և Չէյթունի սովակներուն զրկել, քանի որ ասոնք իրենց պարտապահանջներուն 30 առ հարիւր կ'առաջարկեն եղիբ փաստարանի մը միջոցաւ:

Այս զեղծումը գործին մէջ և Բարեօրոյնը միւս վարչական անդամներն ալ պէտք է որ պատասխանատու բռնուին: Տէր Եղապեանէն սկսեալ մինչև Տ. Կարապետ Երզնկացեանը, ու Պալուսի Փիլիպպոսը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՆ

Իմանի՛ ճարտարակազմի Տիար Սուրէն Պարթեան, Գաղաքս այցելելու առթիւ, Կիրակի օրը տանախոսութիւն մը ըրած է Գաղաքի Ս. Աստուծածին Եկեղեցւոյն մէջ, ուր բաւական թուով ունեղններ կան եղբր:

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՆ

Ի ՆՊԱՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵԼՈՅ

ՈՒԹԵՐՈՐԳ ԾԱՆԿ

Տ. Տ. Երուսաղէմի Հենէր. Երուսաղէմի (Մանուրա) 40, Վարդան Պետրոսեան 40, Բարսեղ Պալլեզեան 60, Գեղամ Տէր Միքայէլեան 100, Առաքել Պէռպէրեան (փոխան ծաղկեփունջի) 100, Գրիգոր Թարազեան (Իպրահիմի) 2000, Կրիգոր Մէօհթէմէան (Չակազի) 5000, Եղապար Ալատին 50, Յ. Ստեփանեան 100, Յ. Յակոբեան 40, Փօղէֆ Հանգի 97,50, Հրանդ Գուլի 60, Արթիւր Գահանեան 30, Տիգրան Արթիւր 97,50, Յ. Գ. Է. Կոզեան 100, Ստեփան Թովհանէսեան 487,50, Եղապար Պէռպէրեան 300, Եղապար Քիւրքեան 200, Տիգրան Թէրզիպաշեան 50, Ոմ 40, Տիգրան Տէր Մարտիրոսեան 40, Յակոբ Գաղանեան 30, Տիգրան Խաճանեան 50, (Մանուրայէն) Առաքել Մանկիկեան, Ոմ, Վարդան Սարափեան, Գարեգին Դեղագործ, Եղիա Պատ-

մանեան, Պետրոս Տէր Յակոբեան, Կարապետ Նէվրուզեան, Պետրոս Վարդանեան, Լևոն Մկրտչեան և Տիֆթի Մօրիս 20ականէն 200, Ոմ, Յովհաննէս Փափազեան, Ոմ Կարապետ Երզնկացեան 20ականէն 80 Ս. Սորոսանեան, Տ. Բէրո, Իսմաիլ Ալի, 10ական զրչէն 30

Գումար 9422,50  
Գմբ. նախորդ ցանկերու 130334,50

ԳՄՐ ԿՐԶ ՈՂ 139757

ԻՆՆԵՐՈՐԳ ԾԱՆԿ

Տ. Տ. Իսթանբուլ Մէօհթէմէան (Չակազի) 500, Մկրտչ Ոհանեան (Միւն-էլ-Կամ) 250, Յ. Գոյսէրեան (Իպրահիմի) 200, Գրիգոր և Ընկ. (Նորթ-էլ-Միւն) 102,50, Կրիգոր Մէօհթէմէան (Նախորդ ցանկի 5000 զրչէն զատ Չակազի 100, Պաշտօնէութիւն Կամսարական գործատան (Չակազի) 200 Հէքիմեան Եղապար (Չակազի) 60 Յովհաննէս Սանաւալեան 60, Փակուս 40, Կարապետ Մազլումեան (Միւնե) 2000, Յակոբ Յովհաննէսեան 60, Երուսաղէմ Ազաճեան 487,50, Սիւրիսարեան և Աղնաօրեան 100, Էմին Հինտի 100, Երուսաղէմ Եղապար 100, Գրիգոր Պալլեզեան 100, Մկրտչ Եղապար 97,50, Գոստանիկ Մէլիքեան 195, Նշան Եղապար 100, Համարձու Իւթի. Երուսաղէմ 97,50, Հանեան Եղապար 97,50, Միհրան Ճիլանեան 97,50 Յակոբ Պալլեան 50, Կիւլպէնի Խանեան 1000,

(Չակազի) Յովհաննէս Ճիլեքեան, Տօքթ. Աբրահիմեան, Եանի Բարաճիա, Եօրկի Անէսթի, Տիկին Մարիկ Մարտիրոսեան, Տիկին Նուրիցա Մամուլեան, Օրիորդ Մարի Սէմէրեան, Ստեփան Տէտեան, Թորոս Քիւրքեան և Մաքսուտ Տէօքմէճի 20ական զրչէն 200

Խաչիկ Տէտեան և Տայի 10ական զրչէն 20, Սիմօն Փրանկիւլեան և Արթիւր Սարգեան 20ական զրչէն 40

Գումար 6455

Գմբ. նախորդ ցանկ. 139757

Համագումար 146212

Գահիրէ, 25/2 1909

Հ. Բ. Ը. Միւթեան ԿԵՒԲ

ՍԻՆԵՄԱԹՕԿՐԱՔ

ՎԵՆԻՍԻԱ

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ ԵՐՈՒԱՆԵՐ ԴԱԼՍԵԱՆ

Պաշտօնի նախապատիւ զինաց քրտնիչի զծիմ վրայ ՆՈՐ ԲՐՕԿՐԱՄ

ՆԱՄԱԿ ԵՐՈՒՍԱԳԵՄԵՆ

ՍՈՒՐԲ ԾԱԿՈՐԱՅ ՎԱՆՈՒՑ ԺԱՌ.

ՎԱՐԺԱՐԱՆԻ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԼՍԱՐԱՆԸՆ ՈՒ ԲԱՆԱԽՈՍՈՒԹԻՆՆԵՐԸ:

Երեկ՝ ժամը եօթին տոններ, տեղոյս ժառ. Վարժարանի ընդարձակ սրահն լեցուեցաւ ուխտաւոր և աղագայն երկսեռ բազմութեամբ մը, ո՛ր բանախօսութիւններ տեղի ունեցան ընդ նախապահութեամբ Իեր. Տ. Յակոբ Եպիս. Աղաթանի, և բազմաթիւ միւս վարդապետաց պատուաւոր, և յարգելի անձանց Բանախօսներէն առաջինն էր Սասունցի Յակոբեան Արամ անուն ուսանող աշակերտը, որը գեղեցիկ և համարձակ, առատ դարձուածքներու մը տակ, ներկայացուց հայաստանի արիւնտ և տխուր կացութիւնն ու ներկայ տագնապալի խժժութիւնները, որք տեղի կունենան գեւ. և հայաբնակ գաւառներու սովատանջ խորերը:

Երկրորդ բանախօսն էր՝ նալ-

բանդեան Պրն. Եսային, որ հանրաժանօթ է իր բազմակողմանի հմտութեամբն ու իր ճարտարախօս հրապարակախօսութեամբ, որը՝ գաղափարաց ճոխ ու գեղեցիկ դասաւորութեամբ մը ի հանդէս բերաւ հայրենասէրի և աղգասէրի իսկական նպատակն ու պարտաւորութիւնը, կեանքն ու խիզախ գործունէութիւնը, յուզեց ու յարտասուտ շարժեց ներկաները իր հոետորական ճարպիկ ու ճկուն գարձուածքներու ներկուտ աղգեցութեան տակ, և իբրև օրինակ ճշմարիտ հայրենասէրներու և աղագայններու՝ ի հանդէս բերաւ փափակ առողջանութեամբ՝ երաջայեցի և եսթեր ներու և Յուզիթ ներու գեղեցիկ շարք մը, որոնք իսկական տրպարներն ու մարմնացումն են անձնանուէր հայրենասէրի ու յաւերտեմական կոթողներ՝ հայրենաբաղձ սիրտերու. և գեղեցիկ օրինակ՝ մեր մատաղ և թարմ կոյսեբուն:

Պատկերացուց նաև ուխտաւոր և տեղացի հայ երիտասարդութեան կարկեղանացի Աննիբաղնիքու և ըՍ. պարտացի Լեւոնիտաներու անձնուէր կեանքն ու խիզախ գործունէութիւնները, իրենց հայրենաց և աղգին նկատմամբ. յիշեց նաև Աւարայրի անվահեր գիւլացիներու հերոսային անպարտելի պայքարն ու ճակատամարտը Պարսկական միահեծան պետութեան հանդէպ. խրախուսեց ու քաջալերեց հայ երիտասարդութիւնը, նմանելու իր նախնեացը, և ընդօրինակելու անոնց գործօն կեանքն ու հակայ գործունէութիւնը:

Նախանդեան Պրն. Եսային իբրև նախկին ուսանող-աշակերտ փառ. Վրթ. Ի՛ ախնարկ մը նետեց և՛ կըրթարանի մասին, յիշեցնելով թէ՛ պէտք է յետ այսու մեծ զարկ տալ զպրոցներուն, և ամեն կերպ բարոյական ու նիւթական աշակցութիւններ չլլանալ կրթութեան և յառաջգիւղութեան մասին:

Յայտարարեց միայնգամայն թէ՛ պէտք չ'է խամբելու և փճացնել արդի հայ երիտասարդ թարմ ուժերը, որոնք մեր ազգի ապագայ կեանքը կը կազմեն, և այդ նուրաբայ յարաճուն ուժերովն է որ մենք զմեզ պիտի փրկենք. պէտք է ամեն միջոցներ ի գործ դնենք և ջանագիր ըլլանք որ ըստ օրէ բեղմնաւորել և արգասաբեր ընել այդ մըտաւոր բարոյական ուժերը, զարգացնել և դաստիարակել նոր մեթոտիկ եղանակաւ, մեկդի թողլով արդի սխալ և Տ. Թաղիկեան, գրութիւնը, որ բուրբոյլին հակառակ և հակասակն է ուսանողական տեսակետով. այսպէս յիշեալ բանախօսը, բաւերու ներդաշնակ ու վայելուչ կարգաւորութեամբ և իմաստի ու գաղափարի գեղեցիկ դասաւորութեամբ մը վերջացուց իր առեւտախօսութիւնը, զո՞հ և շնորհակալ թողլով բոլոր հանդիսատեսներն:

Յետ աւարտման բանախօսութեանց՝ Իեր. Տ. Յակոբ Ս. Արքեպիս. Աղաթանեան ստրի ելինելով այլ-ևս փակեց լսարանը՝ գեղեցիկ և կտրուկ բանախօսութեամբ մը, քաջալերելով Սասունի այդ տասներ թիւ ամեայ ուսանող պատանին, որ այն-

# ՄԵԾ ՎԱՃԱՌՆՈՒՆ ԾԻՒՄՈՏԻ

## ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԶ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՈՂՈՑ ԷՕՂՊԷՔԻՑԷ



# ՄԵՓԱԿԱՆԱՏԵՐԲ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՔԱՐԲ

ՅԱՏԿԱՆԵՐԻ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀՅԱԼ Է .

Արեւելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի աժան գներով ունենալու կամ վախելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՝ պէտք է նախընտրել մեր վաճառատուներ :

Առաջնակարգ սեռակներէ Եւրոպական սիկարներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար հարկ չ'կայ հոս ու հոն ժամափաճառ ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատներին :

Պարսկական ամենաբարձր թէմպէրի ալ և ալ սեռակները բայց մեր վաճառատուներն , ուրիշ տեղերէ գները պարզապէս սխալիլ է :

Մեր վաճառատուներ վերջապէս , ղիներու ամանութեամբ , տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և ալ ամէն տեսակներով , և մասնաւոր գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբ անմրցելի է , որուն անմխտելի ապացոյցներն մին ալ զարդացած եւրոպացիներէ օրրատօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են :

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՔԱՐԲ

քան համարձակ ու բանաստեղծ աւելնով մը խօսեցաւ իր ընտրած նիւթին վրայ . Սրբազան հայրն որքան որ կարծ ու կարուկ ձեռով մը խօսեցաւ՝ բայց միանգամայն կուշիչուով ու յուզիչ եղանակաւ մը զըրուտաց Սասունն իր փառաւոր անցեալին ու արդի քաղաքին և երկաթեայ անոնի ճեղքի կամքին համար և ժողովեց որ ամենքն ալ ունենան սիրան ու հոգին այն Սասունցիներուն՝ որոնք այս քանաձեռայ արիւնտ շրջանին մէջ կուրծք տալին տիրող իշխանութեան բիրտ ուժին դէմ , և ինկան հերոսարար պատերազմի քաջատին մէջ :

Եւ ապա նորին Սրբազանութիւնն դառնալով դէպի Տիար Նալբանդեան ըսաւ՝ կը շնորհաւորեմ զձեզ և Ձեր ճարտարախօսութեան համար , և Ձեր հռետորական այդ գեղեցիկ վայելչաճիւր բանաստեղծեան համար յանձին Ձեր՝ հին Մագիստրոսներու խանդավառ զգացումներ ու պերճաստի դիւթիչ հրապոյրներ կը տեսնեմ . դուք , որքան որ զմեզ՝ և բոլոր ներկայ խուսն երկսեռ բազմութիւնն գոհ և շնորհակալ թողուցիք Ձեր այդ յատակ առողջաբան բանաստեղծութեամբ՝ մենք կրկին և կրկին շնորհակալ ենք Ձեր ազնիւ զգացմանց . Ձեզ Պարոն , միմիայն « Կեզար » մը կը պոկուէք այսօր : Եւ ընդհ . ծովահարութեամբ այլևս վերջացաւ օրուան բանաստեղծութիւնն եղած գրուածութիւնն ու զովստները :

« Արշալոյս » ի նախորդ թիւով պատմուեցաւ արդէն Պ. Նույն Նալբանդեանի վրայ կատարուած սպաննութեան փորձը՝ որ ամսոյս մէկին տեղի ունեցաւ :

Ալ երևակայեցէ՛ք Սիրելի ընթերցողներ , տեսէք թէ՛ որ աստիճան յոռի և տգեղ ցոյցերու կը դիմեն շահամուտութեամբ և անձական կոյր նախանձու ատելութեամբ լեցուած այս սքրագործ վարդապետները , որոնք ամբողջ ժալլած մէկ կողմ գրած , կրնան ինչ որ կուզեն , կը գործագրեն՝ ինչ որ իրենց ներստական ծրարիւր կը արամագրէ , կը հպատակին՝ ինչ որ Ազգ . Կեզր . Վարչապետը կը հրամայէ :

Ալ ի նկատ աւելք , երբ Աւտարանի Վարդապետը՝ փոխանակ խաղաղութեան կրուի կը հրամայէ ,

երբ փոխանակ սիրոյ խաղաղութիւն կը սերմանէ , և միայնգամայն սքրագործութիւն կ'արածէ , ալ ինչ կարգաւէ կիսավարներ լեռնաբնակ քիւրտ աշիրէթներէն , և ինչու կը մեղադրէք անոնց , երբ անոնք մեր կեանքին կարգաւորեն , և մեր գոյքերուն տէր կը դառնան :

Ինչու չպիտի դործեն , երբ բացարձակապէս Կեզրներ կը թողարտէ և կը քաջալերէ , ասոնք երկու երեք ամիսէ ի վեր կղերական ըրեմը մէկդի գրած , Յոպպէի ֆէլաւան նախապետներու հետ կուտեն կը խմեն և աղտոտ վայրեր կը յաճախեն , ինչու չպիտի շփանան , երբ Ազգ . Կեզր . Վարչապետը բացարձակօրէն կը հրամայէ երուսազէմի Պատրիարքութիւնն ու վարչութիւնը չճանաչել բացի իրմէն , և ինչու չպիտի հրամայեն որիչը սպաննել , երբ քաղնին լի է ազգին արիւն - թարախ գրամներով , եւ ինչու չ'ապանեն Պարոն Նույնն , երբ ժողովրդեան գլուխն անցած չի ուղեր որ այդ կուսակցի ղեկավար խումբը վերստին մուտ գտնէ այդ նուիրական յարկին տակ . բայց եթէ ու է փրատ մը յիշեալ անձին նկատմամբ տեղի ունենայ՝ պատասխանատու մենք կը ճանաչենք վերջիցեալ ազգի անունը արատաւորող վրդ . ներք :

Ինչու համար Յարութիւն Պատրիարք իր միտքան վարդապետաց մեծամասնութեան հետ այնքան հեռակրներ տեղացուց Պօլսոյ Ազգ . Կեզր . Վարչութեան և Ազգ . Երեսփոխար . ժողովոյ գրասեղաններուն վրայ , երէցեան Սրբ-Եպիս . ք վանքը վերագրածնելու , և ո՛չ մէկ հեռագրի կարեւորութիւն արուեցաւ , ու պատասխանուեցաւ : Մինչդեռ անգլին , ի Յոպպէ որչափ կուսակցի վրդաց քաջած հեռագրիներուն խորին ուշադրութեամբ մտիկ կընէ , և սիրալոյսով արտօնուող կը պատասխանէ . ինչ է պատճառը ասոր , որովհետեւ շեքմ երկրագործներ և իրնկարիւններ էին Սրբազան վարդապետին . և որովհետեւ Յիշեալ « Երդ » ունալ և ուխտեալ է ոչ ունել և ո՛չ ըմպել մինչև սպաննել զերէցեան Գէորգ Արք . Եպիս . և զՄաքսուտեան Ղևոնդ վրդն . անկարելի է ասոնց դարձը :

ԲԱՅՔԵՐՈՒՆԻ

## ՄԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅՈՒՅԻՉ Ժ . ՆԱՅՏԻՆԻԿԻՐ

Պալատի փողոց . Խաչնէտարի սեփականութիւն , Պրիւժօլ Օթէլի ճիշտ դիմաց Գաֆէ Տը Լա Պուրսի կից

Հին ԵՒ ՆՈՐ ՍԵՏԱՐԶՆԵՐՈՒ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՉ ՄԱՍՆԱԾԻՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Սինգլիներն են և ստոնցմէ մինչեւ ցարդ 17,000,000 ծախուած է :


400 հ աւելի վիսայիսն և մեքայներով վարձատրուած , Եւրոպայի ամենալաւ մեքենաներ ,

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎՍՐՁԱՍՏՐՈՒԹԻՒՆԸ  
ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանախնդիսին մէջ ստացած է .  
ՀԱՅՐԱՅՈՒՅ ԲՐՈՒՄԻՈՑ ՀԱՅՐԱՅՈՒՅ ԱՆԳՂՈՑ ԿԱՅՆԵՐԱԿԱՆ  
ԱՅՆԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՐԻՆ ԵՒ ԲԱՂԱՍՏՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵՆԱՑ  
ՀԱՅՐԱՅՈՒՅ Ե . Ք . ՆՅՏԻՆԻԿԻՐ ԵՂՔԱՐԲ

Կեղծ երէն զուշանալ , ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԻՐ յաճականչիմ

ԳԻՆ ՀԱՓԱՒՈՐ



### ԴԻՒՐՈՒԹԻՒՆ

### ԴԻՒՐՈՒԹԻՒՆ

Ալ հոգ մի՛ ընէք թէ՛ ձեր կարի մեքենաները Շայնաչի մը զլխուն վրայ դրած հոս ու հոն պիտի փոխադրէք նորոգելու համար :

Պ. Սարգիս Թաշճեան իրեն գիտող շատ մը յաճախորդներին քաջալերուած , տեսնէ՛ մը ի վեր իր պաշտօնը թող չ'ընէ . յատուկ կտաք պատրաստած է և իր շրջունն ու շարժական խանութը « Վարձ » ին (անոր պարիկ ձիւն անունն է) բարձր ամէն թիւէ կանցնի ամէն օր և ամէն ժամ :

Ձերքը ճանչնալու դժուարութիւն չկայ : Պարիկ ձիւն մը քաջած կտաքին վրայ երբ մեքենաներու գործիքներ տեսնէք , որուն շոր կողմը ամեն լիզուով դրուած է , մանաւանդ Réparation des Machinesը , անմիջապէս կ'ամ « Վարձ » յիշեցէք . և կամ քիչ մը անցին Սարգիս Թաշճեանը տեսնելու օրէնք , իր կարգաւ կտաքէ քոտեյին մէջ , անիկայ ոչ միայն կարի մեքենաներու նորոգութիւն կը ընէ անմասն յաջողութեամբ և երաշխաւորեալ , այլ և նոր մեքենաներ ալ կը հայթայթէ :

Չ'մոռնա՛նք նաեւ կապի վաճառաներու և ֆոնօկրաֆոններու նորոգութիւնը և նորիւրու հայթայթումը :

Պ. Թաշճեան այս դիւրութիւնները ընծայելով , իր նմաններուն ծառայած ըլլալու պատիւով իրեն պիտի ունենայ , և քիչ մ'ալ դրամ չ'ահիլ պիտի ուզէ , իր պիտիակներուն զատարարութեանը յատկացնելու համար :

### ԻՍԻՈՒ ԳԻՐԲԵՐ

« Արշալոյս » ի սպարանին մէջ , Շէրիֆ քաջայի պարտէզին դիմաց կը վաճառուին հետեւեալ պրօշուրները :

Ա. ՊԱԼԵԱՆ

ԺՈՂՈՎՈՒԹԻՒՆ ՄԱՏԵՆԱԿԱՐԱՆԸ

Թիւ 1 Թրքուհին 50 սանթիմ

« 2 Հիւլէն 50 »

Թիւ 3 պրօշուրը թէ՛ն հրաշալիք մը բայց ինչ ինչ նկատուելի զանց կը ընենք անունը յիշատակել կարճ ժամանակի մը համար . ղիւնն է մէկ ֆրանք : Գիմել Արշալոյսի Խմբագրութեան զատ Հեղինակին հասցէին օր է .

Mr. A. Balian  
Le Caire

## ՄԸՄՍԱՐ

### ԳԵՈՐԳ ԱԼԱՃԱՃԵԱՆ

Կը հայրաքիտ տեսնել , դրամական շիտխոտորիսներ , կանխորեալ սեփականներ , հողի , խանութի եւ կաշուածներու փոխանցման գործառնութիւն :

Իր կեդրոնատեղին է Պազար Մուրուրի գրան քովի երկու սրճարանները ամէն օր ժամը 7 էն մինչև 12 կէս օրէն առաջ , և ժամը 2 էն 3ը կէս օրէն յետոյ :